

Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ, ՇՐԱԲՈՒՄԱԿԱՆ ԹԱՄԱՆԻՉՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ
ճԱՅԼԵՆՈՒՄ, ԳԱ ԲՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1970, 309 էջ

Հայ քերականադիտությունը քերականական համանիշների քննությամբ առասարակ քիչ կամ հարևանցիորեն է դրադվել, և այդ ուղղությամբ այժմ կատարվող ածեն մի քայլ ինքնին դրական է հենց միայն եղած պակասը կրճատելու նկատառումով: Հրապարակի վրա է Ն. Պառնասյանի նոր մենագրությունը, որն ամփոփում է ժամանակակից հայերենի քերականական համանիշների հեղինակի ծրագրած ամբողջական ուսումնասիրության մի զգալի մասը: Սույն ուսումնասիրությունը նվիրված է հիմնականում պարզ նախադասության սահմաններում շարահյուսական համանիշների քննությանը և բաղկացած է երեք մասից՝ «Ներածություն» (էջ 7—42), «Նախադասության կառուցվածքի և բնույթի հետ կապված շարահյուսական համանիշներ» (էջ 43—117) և «Նախադասության անդամների քերականական արտահայտության համանիշ ձևերը» (էջ 118—303):

Աշխատության ոչ այնքան ծավալուն ներածության մեջ հեղինակը խոսում է քերականական համանիշների ըմբռնման ու ձևա-իմաստային դրսևորումների մի շարք կարևոր հարցերի մասին, որոնք այդ ծավալով ու խորությամբ հայերենագիտության մեջ, ըստ էության, առաջին անգամ են արծարծվում: Վիճելի որոշ խնդիրների նկատմամբ Ն. Պառնասյանն ունի իր սեփական մոտեցումը, և դա զորքի արժանիքներից մեկն է: Այս իմաստով, հատկապես ուղում ենք շեշտել շարահյուսական համանիշների էական հատկանիշների հեղինակային վերլուծումները և շարահյուսական համանիշների բնորոշումը, որը մեզ ծանոթ սահմանումներից առավել հիմնավորն է:

Ձեռքի տակ ունենալով հարուստ նյութ և դրա դասակարգումը կատարելով ճիշտ սկզբունքներով, հեղինակը ժամանակակից հայերենի շարահյուսական համանիշությանը վերաբերող բազմաթիվ հարցեր է քննել նաև մյուս բաժիններում: Նախադասության կառուցվածքի և բնույթի հետ կապված շարահյուսական համանիշները նկարագրելիս նա ցույց է տվել համանիշային այն բոլոր անցումները, որոնք առկա են միակազմ և երկակազմ, թերի և լրիվ, պատմողական և հարցական, հարցական և հրամայական և այլ տիպի պարզ նախադասությունների միջև: Նախադասության անդամների քերականական արտահայտության համանիշ կառուցվածքներին նվիրված բաժնում Ն. Պառնասյանը հանգամանորեն ու մանրակրկիտ վերլուծություններով ներկայացնում է ենթակայի, ստորոգյալի և սրանց լրացումների համանիշային շարքերը (սա արվում է գերազանցապես նախադասության մակարդակով): Երկու բաժիններում էլ փաստական նյութի նկարագրությունը և կոնկրետ-լեզվական խնդիրների լուծումը կատարվում են ընդհանուր-տեսական բացատրությունների ու հիմնավորումների արդյունավետ զուգակցումով, ինչպես նաև արվում են համապատասխան եզրակացություններ:

Ն. Պառնասյանի աշխատությունը ունի նաև այլ արժանիքներ, որոնք միայն կթվենք:

Հեղինակը հայերենի նյութը ոչ թե հարմարեցնում է նախապես մշակված ու արհեստական սխեմաների (գծախտաբար, երբեմն այսպես արվում է), այլ կոնկրետ լեզվականից է գնում դեպի այդ սխեմաների կազմումն ու տեսական ընդհանրացումները՝ միանգամայն ճիշտ ճանապարհով շարահյուսական համանիշության հետ կապված երբեմն բավական բարդ երևույթների բացատրման համար: Նման մոտեցումով են շարադրված, օրինակ, խնդիրներին և պարագաներին նվիրված հատվածները և այլն:

Անհրաժեշտության դեպքում նշվում են համանիշային յուրաքանչյուր խմբի քերականական-կառուցվածքային, իմաստային-երբերանդային և ոճական-կիրառական առանձնահատկությունները, և փորձ է արվում ցույց տալ այն տեղաշարժերը, որոնք նկատելի են շարահյուսական համանիշության համակարգում:

Հետադուրս արդյունքներն ու համանիշային այս կամ այն երևույթը ավելի հավաստի և հասկանալի դարձնելու նպատակով համաժամանակյա վերլուծությանը զուգահեռ հեղինակը ոչոք տեղեկություն դիմել է նաև տարածամասնակյա քննությանը (օրինակ, ուղիղ խնդրի արտահայտման համանիշ ձևերը նկարագրելիս)։

Ն. Պառնասյանը բավական բծախնդիր է նաև զրական լեզվի նորմայի տեսակետից շարահյուսական համանիշների շարքերի զննատման հարցում։ Գործնականորեն շատ օգտակար է, որ հետևողականորեն նշվում են արդեն հնացած կամ ժողովրդական-խոսակցական միջավայրից զեղարվեցողական գրականության կամ մամուլի լեզվի մեջ թափանցած քիչ գործածական կամ ոչ հանձնարարելի ձևերը։

Հիմնականում պահպանված է քննարկվող հարցերի համաժամանակությունը, նաև այն կարևոր հանդամանքը, որ հեղինակի համար առաջնային և երկրորդական խնդիրներ չկան. թեմայի սահմաններում նրա ուղադուրսներից չի վրիպել շարահյուսական համանիշության քիչ թե շատ էական որևէ հարց։

Հայ քերականադիտության մեջ առաջին անգամ Ն. Պառնասյանը ձեռնարկել է դժվարին մի թեմայի համաժամարար ամբողջական ուսումնասիրությունը, և բոլորովին էլ անսպասելի չէ, որ մենագրության մեջ կան նաև անձշտություններ ու թերի բացատրություններ։ Սրանց զխավոր պատճառը, մեր կարծիքով, լեզվաբանության մեջ շարահյուսական համանիշության պրոբլեմի դեռևս ոչ ավարտուն մշակվածությունն է և հայերենի քննարկվող նյութի յուրահատուկ բազմապիսությունը։

Նշենք մեր դիտողություններից մի քանիսը։

Ներածության մեջ ասվում է, որ մասնավորապես քերականական համանիշների հարցը հանդիսանում է նաև լեզվաբանական նորագույն ուղղությունների կենտրոնական հարցերից մեկը՝ կապված հատկապես փոխակերպության (трансформация) մեթոդի զարգացման և կիրառության հետ (էջ 17)։ Այդ կապակցությամբ հեղինակն ընդհանուր գծերով ներկայացնում է նաև սովետական լեզվաբան Ս. Շահումյանի տեսակետը քերականական համանիշների հասկացության և հարակից մի շարք այլ խնդիրների մասին, միաժամանակ նշելով, որ «Փոխակերպության մեթոդը, ինչպես հայտնի է, նպատակ ունի վեր հանելու միևնույն հիմնական անփոփոխակի դրսևորման բոլոր տարբերակները։ Այս տեսակետից, իրոք, այդ միջոցով թվարկված փոխակերպությունների շարքի մեջ են մտնում նաև քերականական համանիշները» (էջ 20)։ Նույն հարցին Ն. Պառնասյանը անդրադառնում է նաև շարահյուսական համանիշների առանձնահատկությունների մասին խոսելիս. «Բոլորովին այլ է փոխակերպությունը, որը իրոք կարող է հանդիսանալ շարահյուսական համանիշների որոշման շափանիշ։ Եթե մեկ շարահյուսական կառուցվածքը կարելի է ենթարկել այնպիսի կառուցվածքային-քերականական փոփոխության, որի ընթացքում շարահյուսական հարաբերությունների հիմքում ընկած առարկայական հարաբերությունները մնում են նույնը՝ ձևերը փոխվում, նրբերտնջային տարբերություններ, ապա զործ ունենք տվյալ հարաբերության դրսևորման համանիշ ձևերի հետ։ Տվյալ շարահյուսական կառուցվածքը կարող է ունենալ այնքան համանիշ ձև, որքան հնարավոր է այն ենթարկել այդպիսի փոխակերպության» (ներածություն, էջ 37)։ Առաջ քաշելով իրոք հետաքրքրական այս հարցը, հեղինակը, սակայն, կանգ է առել կես ճանապարհին և հետագա շարադրանքում բավարար չափով այն չի խորացրել (առանձին ակնարկներ կան, օրինակ, 64, 110 և այլ էջերում)։ Մեր տպավորությամբ, նա փոխակերպության հարցին մոտեցել է փոքր-ինչ նեղ առումով, քանի որ դրանց միջև թույլատրելի տարբերակվածությունը համարում է սոսկ ոճական, նրբերանգային։

Թվում է, որ այստեղ ավելի նպատակահարմար կլիներ հարցի լայն առումով քննարկումը, որի դեպքում շարահյուսական համանիշների շարքերը, առանց խիստ սահմանափակության, էներգիանային վերափոխված տարբերակների (շարքերի) հետ Ունենալով այդպիսի մոտեցում, ինչ-որ չափով վերապահորեն կարող ենք ասել, որ շարահյուսական համանիշների մեջ ոչինչ չկա, որ շարտահայտվի հնարավոր իրական փոխակերպությունների շարքերում, և ընդհակառակը, փոխակերպությունների շարքերի յուրաքանչյուր անդամ չի կարող մյուսների հետ համանիշության հարաբերության մեջ չդառնալ։ Այստեղ տարբերությունները կարող են ավելին լինել, քան միայն ոճականն ու նրբերանգայինը։

Մեզ համար կարևոր է ունենալ շարահյուսական համանիշների շարքերի (իմա՝ փոխակերպությունների շարքերի) հնարավոր ամբողջության պատկերը, այսինքն՝ համանիշների առավելագույն փակ շարքերը, իսկ ինչ վերաբերում է, այսպես կոչված, հիմնական (միջուկային, անփոփոխակային) և տարբերակային (փոփոխակային) շարահյուսական կառուցվածքների առանձնացմանը, ապա խոսքային տվյալ իրադրությամբ պայմանավորված՝ ելակետային այդպիսի

կաղապարի արժեք կարող է վերադրվել ցանկացած կառուցվածքին, որով շարահյուսական համանիշների նկարագրության մեջ կական ոչինչ չի փոխվի:

Խոսելով համանիշ ձևերի օգնությամբ ներկա ժամանակի ստորոգյալի ալլեայլ դրսևորումների մասին, Ն. Պառնասյանը էջ 135-ում բերում է համանիշների շարք և համապատասխան սխեմա: Բնականաբար, շարքի ամեն մի անգամ սխեմայում պետք է ունենա դրանցման իր պոզակիցը, մինչդեռ սխեմայի մեջ բացթողում կա:

Մեր դիտողությունը, սակայն, այս վրիպումի մասին չէ: Հեղինակը, ինչպես ինքն է գրում, տեղ թիւ դրադենելու և պատկերը ավելի պարզ դարձնելու նպատակով աշխատության մեջ օգտագործում է սխեմաների տառային դանաղան նշանակումներով համառոտագրումները Այսպես՝ Ե+Եղ. Բ.+ԺՊ+Ապ. Բ. ներկ. Ժամ., որ ստացվել է օենթակա+եղանակավորող բառ+ժամանակի պարադա+րայի ներկա ժամանակով դրված պարզ ստորոգյալս ծավալուն սխեմայից: Ընդդէմ Լ. ժամանակակից լեզվաբանական դրականության մեջ համառոտագրումները (նաև՝ դանաղան պարզ ու բարդ սխեմաները) իրոք որ լայն կիրառություն ունեն և բազմաթիվ գործածվելով՝ նկարագրության մեջ և՛ որոշակի հստակություն են մտցնում, և՛ տեղ խնայում, բայց այստեղ դրանք իրենց բուն նպատակին չեն ծառայում: Դործնականորեն շարագրանքի մեջ ձուլված չեն (տեղ չի խնայվում) և, որպես կանոն, բերվում են սրինակներից ու բացատրություններից հետո միայն, որի հետևանքով այդ համառոտագրումներն ավելի շուտ ստանում են ամփոփման բնույթ և պետք են դալիս միայն մեկ անգամ և միայն տվյալ տեղում, այնպես որ միանգամայն հանգիստ կարելի էր օգտագործել սխեմաների լրիվ ձևերը: Երբեմն էլ կողք-կողքի տրված են ծավալուն սխեման և սրա տառային համառոտագրումը, որով, ըստ լույսյան, դրանցից մեկը դառնում է ավելորդ:

Մեր կարծիքով, վատ չէլ լինի, եթե հեղինակը քննարկվող նյութի սահմաններում առանձնացնեն և իրար մոտ ներկայացնեն նաև շարահյուսական համանիշների երկու հիմնական տիպերը՝ շեզոլ և ոնաբանական կամ ոնական (պայմանական անվանումներ են): Սրանք իրարից որոշակիորեն տարբերվում են: Այսպես՝ առաջին դեպքում շարքի անդամների մեկը մյուսով փոխարինում իմաստբանդային, հուղա-արտահայտչական և ոնական նկատելի տարբերակվածություն չի առաջացնում, այսինքն՝ փոխադարձ նույնարժեք փոխարինելիությունը բացառված չէ, խոսքային դրեթն բոլոր իրադրություններում ընտրությունը հարաբերականորեն ազատ է, և չի փոխվում հաղորդման նկատմամբ խոսողի վերաբերմունքը (օր.՝ Այնտեղ վաճառում են տնտեսական իրեր → Այնտեղ վաճառվում են տնտեսական իրեր), մինչդեռ երկրորդ դեպքում առկա է հաղորդման բովանդակության նկատմամբ խոսողի որոշակի վերաբերմունքը, և փոխարինումը նկատելիորեն անդրադառնում է դրա վրա, իսկ ձևերի ընտրությունը հարաբերականորեն կախված է խոսքային տվյալ իրադրությունից (օր.՝ Սրանից հետո դեղնա ու ճավատալ նրան → Սրանից հետո նրան ճավատալ չի կարելի): Ն. Պառնասյանը թեև այս հարցերը շոշափել է, բայց դրանք մեկտեղված չեն, և նշված տիպերի մասին կոնկրետ խոսք չկա: Սրանց հետ կապված՝ կարող էին առաջադրվել և քննարկվել նաև ոչ երկրորդական մի շարք այլ հարցեր (ոնաբանորեն նշանակիր և ոչ նշանակիր համանիշներ, դրանց գործածության տարբեր ոլորտների մոտավոր որոշումը, համանիշային շարքի անդամներից մեկի ընտրության բնույթը և այլն):

Որոշիչ-որոշյալի և հատկացուցիչ-հատկացյալի հարաբերությունն արտահայտող համանիշ քերականական ձևերի մասին խոսելիս հեղինակը կանգ է առնում նաև այն դեպքերի վրա, երբ «համանիշության մի եղանակով շարահյուսական միավոր է՝ բառակապակցություն, մյուս եղանակով՝ ձևաբանական միավոր է՝ բառաձև» (էջ 211, 214), Հմմտ. ներս մտան մի խումբ աշակերտներ, որոնցից առաջինը աղջիկ էր (փոխանվանական կիրառությամբ հանդես եկած առաջինը համանիշ էր է առաջին աշակերտը բառակապակցությանը): Այսպես նաև՝ օրենք → այս օրենքին, մատիտ → իմ մատիտը և այլն: Այս համանիշները Ն. Պառնասյանն առաջադրում է անվանել շարահյուսական-անաբանական նվաճելիներ: «Ներածության» մեջ (էջ 34) հեղինակը գրում է, որ «տարբեր խոսքի մասերի միջև հանդես եկող և նույն բառական ձևով են ունեցող համանիշները ավելի ճիշտ կլինի կոչել բառա-անաբանական նվաճելիներ» (օր.՝ դառն → դառնորեն): Ինչպես տեսնում ենք, համանիշների այս խմբի տարբերակման հիմունքը ընտրված է ճիշտ, և բացատրությունն էլ բավական հստակ է: Սակայն հանդիպում են առանձին դեպքեր, երբ խախտվում է որոշ կարգի համանիշների տեղաբաշխումը: Այսպես՝ էջ 283-ում բերվում է «Ամեն անգամ, երբ մտքիս մեջ իրականացնում եմ նրան, միշտ տեսնում եմ այդ լսարին աշխատանքի վրա...» օրինակը, որի աշխատանքի վրա ձևի պարագային կարող է փոխարինել սրան հավասարարժեք շարահյուսական համանիշ աշխատելիս դերբայական ձևը, Իրրև եղրակացություն,

հեղինակը դրում է, սրանք սովորական շարահյուսական համանիշից տարբերվում են նրանով, որ իրարից սահմանազատվում են նաև խոսքի մասային պատկանելությամբ. «առաջին դեպքում դորժ ունենք դոյականի հետ, երկրորդ դեպքում՝ զուգընթացական դերբայի հետ: Այս առումով սրանք որոշ չափով մոտենում են բառային-ձևաբանական համանիշներին»: Նշվում է նաև, որ, օրինակ, սրանց է առնչակցվում համանիշների հետևյալ շարքը՝ մեղմ իջեել — մեղմորեն իջեել — մեղմությամբ իջեել — մեղմ կերպով իջեել և այլն: Բայց չէ՞ որ մենք շարքի մի եզրում ունենք բառակապակցային համանիշներ՝ աշխատանքի վրա, մեղմ կերպով իջեել: Ուրեմն հարկավոր էր այս երևույթը կամ տերմինաբանորեն ճշգրտել (հեղինակի եորոշ չափով են մոտենում) — թեև մեղմացում է, բայց հարցը չի լուծում), կամ ներկայացնել այլ կերպ, որով կրացահատվեին համանիշ շարքերի սահմանային իրական հնարավորությունները:

Մենագրության մեջ երբեմն բավական մանրամասն և ընդարձակ օրինակներով նկարագրվում են շարահյուսական այնպիսի երևույթներ, որոնք հանրահայտ են և վաղուց բացատրված, իսկ հաճախ էլ բոլորովին չեն առնչվում կամ շատ քիչ են առնչվում ուսումնասիրության բուն նյութին: Շարադրանքը ծանրաբեռնող այդպիսի մանրամասներ կան, օրինակ, 67—73, 76, 129, 144, 191, 261 և այլ էջերում:

Ն. Պառնասյանը հետազոտվող լեզվաչափի մանավանդ բնագրային ընտրությունը մեծ մասամբ կատարել է հաջող, սակայն տեղ-տեղ, այնուամենայնիվ, հանդիպում են անհամոզիչ օրինակներ: Այսպես՝ Մի գնա՞ս ջուր բերես, Մի վազե՞ս ցրանց տուն տիպի նախադասությունների մասին ասվում է, որ դրանք «գործածվում են որպես խիստ քաղաքավարական ձևեր» (էջ 114): Մեկ այլ տեղ հեղինակը գրում է, որ «հաճախ պայմանի երկրորդական նախադասություններում գործածվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը, որով պայման հանդիսացող նախադասությունը խոսողի կողմից դիտվում է որպես անպայման, հաստատ կատարվելիք» (էջ 173): Բերված օրինակներից է՝ Եթե ստացա քո համաձայնությունը, անմիջապես կմեկնեմ (սրա համանիշն է՝ Եթե ստանամ...): Կարծում ենք, այստեղ ոչ մի հիմք չկա պնդելու գործողության անպայման կատարվելու հանգամանքի վրա, քանի որ դժվար է այդ առումով իրական տարբերություններ ցույց տալ համանիշ շարքերի միջև: Հմմտ. նաև հետևյալ դեպքերը՝ Եթե տեսա. ասելու եմ (կասեմ) — Եթե տեսեմ... և այլն:

Երբեմն պատահում են նաև անհաջող փոխակերպության դեպքեր. օր.՝ Համեմատեց պատի վրա եղած հասցեի հետ — Համեմատեց պատի վրա եղած հասցեին և այլն:

Ն. Պառնասյանի մենագրությունը, որ նվիրված է համանիշության երևույթի մի կարևոր բնագավառի քննությանը, իր թերություններով հանդերձ կարող է դասվել սովետահայ լեզվաբանության վերջին շրջանի հաջողված գործերի թվին և հետաքրքրական ուսումնասիրություն է ինչպես հետազոտվող նյութի ամբողջականացման ձգտումով, այնպես էլ տեսական որոշ կարգի ընդհանրացումներով: